գրեալ եմք. և զորպիսութիւն Ջալալոցս գիտասցես զայն ճառն ընթեռնելով» (էջ 75), Դավրիժեցին մանրամասն իրականացնում է «Յաղագս յայտնելոյ Ջալալոցն և սաստիկ սովուն և մարդակեր գայլոցն, և այլ ևս աւարառութեանցն՝ որք ժամանեցին ի վերայ աշխարհի» վերնագրված է գլխում: ԺԸ գլխում մի առիթով հիշատակելով Նիկողայոս անունով վարդապետին, ով տվյալ գլխի վկայագրություններում կարևոր դերակատարություն չունի, Դավրիժեցին նշագրում է՝ «...զորոյ զորպիսութիւն ծանիցես ի նոցին պատմութենէ, զոր զկնի առնելոց եմք» (էջ 201), և այդ ծրագիր-խոստումն իրականացնելով՝ կենդանագրում է լվովցիների հոգևոր առաջնորդ Նիկոլի չարահնար ու վտանգավոր վարքը՝ «Պատմութիւն նեղութեանց և վշտոց զոր կրեցին Հայ ազգաւ քրիստոնեայք, որք բնակեալք են ի քաղաքն Իլով» վերնագրով ԻԸ գլխում:

Մեկ այլ տեղ՝ «Պատմութիւն վարդապետութեան եւ վարուց սրբոյ վարդապետին Պօղոսի» վերնագրով ԻԳ գլխում, Դավրիժեցին միաժամանակ և՛ ամրագրում է ծրագիր-խոստումը, և՛ երկուերեք նախադասությամբ պարագրկված ներկայացնում խոստումի ընդհանուր բովանդակությունը. «Այլ և գոյ միւս այլ պատմութիւն որպէս և գրելոց եմք յառաջիկայդ՝ ***ի ճառս պատմութեան նահապակութեան տէր Անդրէաս քահանային,*** թէ մատնեցին զՊօղոս վարդապետն և զՄովսէս վարդապետն Շահաբաս թագաւորին. զորս կալեալ էառ երեք հարիւր թուման տուգանք և ապա եթող» (էջ 236–237): Ընդ որում՝ խոստումն իրականացվում է հենց այն վերնագրով գլխում, որը կանխավ նշագրել էր պատմիչը: Հասնելով ծրագիր-խոստումի իրականացմանը, Դավրիժեցին հաճախ հարկ է համարում հիշեցնել, որ այդ մասին կանխավ էր խոստացել գրել: Ինչպես՝ «Այժմ ասասցուք զպատճառ հակառակութեան կաթուղիկոսացն» (էջ 183), «Այլ արդ՝ օժանդակութեամբ Հոգւոյն սրբոյ ըստ խոստման մերում, արդեն այժմիկ սկսցուք զկարգ կաթուղիկոսացն ի սրբոյ Ներսիսէ Կլայեցւոյ կարգաւ, և հասուցուք